ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/1

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2023ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ:

Բացակա էին՝ Անահիտ Աղամալյանը, Արթուր Գրիգորյանը, Արարատ Թումանյանը, Արմեն Հայրապետյանը, Արտուշ Մաթեվոսյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, ՀՈԱԿԻ-ի տնօրեններ, վարչական ղեկավարներ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Բագրատ Զաքարյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Աննա Նավասարդյանը:

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի 2023 թվականի փետրվարի 15-ի N1 հերթական նիստի օրակարգը՝

1)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը 2023 թվականին օգտագործման, կառուցապատման իրավունքով տրամադրելու և օտարելու, հրապարակային սակարկությունների վարձավճարների և օտարման մեկնարկային գները հաստատելու մասին

2)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2023 թվականին օտարման կամ օգտագործման տրամադրման ենթակա հողամասերի ցանկը հաստատելու մասին

3)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին

4)Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վարձավճար սահմանելու մասին

5)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Զոյա Գրիգորի Գրիգորյանին օտարելու մասին

6)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականությանը պատկանող տարածքները հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-ծրագիր 4-ի Քաջարան-Ագարակ հատվածի շրջանակներում հանրության գերակա շահերի ապահովման նպատակով Հայաստանի հանրապետությանը ուղղակի վաճառքով օտարելու մասին

7)Մեղրի համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

8)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին

9)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի արցախյան 1-ին և 2-րդ պատերազմներում զոհված և անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին աղբահանության ծառայության դիմաց գանձվող տեղական վճարի պարտավորությունների զիջման արտոնություն տրամադրելու մասին

10)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող կառուցապատման կամ վարձակալության իրավունքով տրամադրված հողամասերի վարձավճարի տույժերը զիջելու մասին

11)Փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն սահմանելու մասին

12)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 1-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը 2023 թվականին օգտագործման, կառուցապատման իրավունքով տրամադրելու և օտարելու, հրապարակային սակարկությունների վարձավճարների և օտարման մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից և տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 2-Ն/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՕՏԱՐՄԱՆ ԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հաստատել Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից 2023 թվականին օտարման կամ օգտագործման տրամադրման ենթակա հողամասերի ցանկը՝ համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 3-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին ՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 4-Ա/

ԼՍԵՑ - ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լեհվազ բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում կատարել փոփոխություն և համաձայն N1 հավելվածի, որպես առաջնահերթ միջոցառում, պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 7,84063հեկտար (1միավոր) մակերեսով այլ հողատեսք (կադաստրային ծածկագիր՝ 09-037-0204-0001-ից)փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ «ընդերքօգտագործման հողեր» գործառնական նշանակության՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընդերքն օգտակար հանածոների արդյունահանման համար:

2.Սույն որոշման 1-ին կետով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ «ընդերքօգտագործման հողեր» գործառնական նշանակության փոխադրված 7,84063 հեկտար (1 միավոր, կադաստրային ծածկագիր՝ 09-037-0204-0001-ից) մակերեսով հողամասը օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, կառուցապատման իրավունքով տրամադրման վարձավճարը սահմանել տարեկան 2 352 189 (երկու միլիոն երեք հարյուր հիսուներկու հազար հարյուր ութսունինը) ՀՀ դրամ:

3.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /Որոշում N 5-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՋՈՅԱ ԳՐԻԳՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի համայնք Ագարակ քաղաք Սայաթ-Նովայի փողոց թիվ 4/2 հասցեում գտնվող 18,3 քմ արտաքին մակերեսով շինությունը /ավտոտնակը/ և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00183 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0035-0031, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 09021023-09-0004 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Ջոյա Գրիգորի Գրիգորյանի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի սահմանված գներով.

1) Ավտոտնակի համար՝ 10 000 դրամ x 0,1209 x 18,3 քմ = 22 125 /քսաներկու հազար հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ:

2)Պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի համար՝ 1221 դրամ x 18,3 քմ = 22 344 /քսաներկու հազար երեք հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ:

3) Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 23 000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 6-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 4-Ի ՔԱՋԱՐԱՆ-ԱԳԱՐԱԿ ՀԱՏՎԱԾԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇԵՑ - 1.Տալ համաձայնություն Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, հանրության գերակա շահ ճանաչված հողամասերը առաջարկված փոխհատուցման գումարներով օտարելու Հայաստանի Հանրապետությանը՝ համաձայն հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 7-Ա/

ԼՍԵՑ - ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/

1.Հաստատել Մեղրի համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝
1) եկամուտների գծով՝ 836 564, 837 հազար դրամ
2) ծախսերի գծով՝ 800 713, 807 հազար դրամ:
2.Հաստատել բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հետևյալ հավելվածների.
1) Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ առանձին եկամտատեսակների՝ հավելված N1
2) Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ գործառնական դասակարգման՝ հավելված N2
3) Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հավելված N3
4) Համայնքի բյուջեի հավելուրդի կամ դեֆիցիտի՝ /պակասուրդի/ կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ հավելված N4
5) Համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրների կամ հավելուրդի օգտագործման ուղղությունների կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ հավելված N 5:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 8-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/

Հաստատել Մեղրի համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 9-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՑԱԽՅԱՆ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԵՎ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԻՋՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում արցախյան 1-ին և 2-րդ պատերազմներում զոհված և անհայտ կորած զինծառայողների ընտանիքների նկատմամբ (համակեցությամբ բնակվող) ընթացիկ առ 01.01.2023թ. և առ 31.12.2023թ. աղբահանության ծառայության դիմաց գանձվող տեղական վճարի գծով արտոնություն՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 10-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՏՈՒՅԺԵՐԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Զիջել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող կառուցապատման կամ վարձակալության իրավունքով տրամադրված հողամասերի վարձավճարի տույժերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /Որոշում N 11-Ա/

ԼՍԵՑ - ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Սահմանել փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ՝

1)ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Մրգանուշ փողոց, 1 փակուղի, տուն 9 հասցեում հաշվառված Ապավեն Աշոտի Բեգլարյանին (ծնված 07.08.1980թ., ՀԾՀ՝ 1708800107) սեփականության իրավունքով իրեն պատկանող MERCEDES-BENZ C230 մակնիշի (թողարկում՝ 2007թ., պետ. համարանիշ՝ 36SQ361, ձիաուժ՝ 204) ավտոմեքենայի համար տրամադրել փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն՝ 57 600 (հիսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով՝ ազատելով 2023 թվականի տարեկան փոխադրամիջոցի գույքահարկի վճարումից

2)ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Չարենցի փողոցի շենք 3. բնակարան 8 հասցեում հաշվառված Մարտին Մաթևոսի Հովհաննիսյանին (ծնված 10.10.2000թ., ՀԾՀ՝ 2010000021) սեփականության իրավունքով իրեն պատկանող BMW X5 3.0 I մակնիշի (թողարկում՝ 2006թ., պետ. համարանիշ՝ 09JJ707, ձիաուժ՝ 231) ավտոմեքենայի համար տրամադրել փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն՝ 75150 (յոթանասունհինգ հազար հարյուր հիսուն) ՀՀ դրամ գումարի չափով՝ ազատելով 2023 թվականի տարեկան փոխադրամիջոցի գույքահարկի վճարումից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 12-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի մարտի 16-ը՝ ժամը 15:00-ն:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 13-Ա/

Ավագանու անդամներ

ՍՈՆԱ ԱԴԱՄՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՐՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ՄԱՐՈՒՍՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՇԱՀԵՆ ՄԻՆԱՍՅԱՆ

ՄԱՐՅԱՄ ՄԻՔԱԵԼՅԱՆ

ՆԱՐԵԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ԱՐԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱՆԺԵԼԱ ՎԱՆԵՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ա.Նավասարդյանը